

Նարեկ Գալստյան

Եվրոպականացման գործընթացները Հարավային Կովկասում

Արդի հասարակական-քաղաքական զարգացումների շարքում կարևոր նշանակություն է ստացել եվրոպականացումը, որը, ըստ էության, եվրոպական քաղաքակրթության հիմքով հասարակական կյանքի զարգացման եվրոպական և Եվրոպային հարակից երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային առաջընթացի, արմատական որակական փոփոխությունների այն բազմաճյուղ ու բազմաբովանդակ ինտեգրացիոն գործընթացների անհրաժեշտ հիմք ու սկիզբ հանդիսացող ամբողջությունն է, որը, հիրավի, կարող է դիտարկվել որպես քաղաքական բարեփոխումների նոր ալիք եվրոպական մայրցամաքում և հարակից տարածաշրջաններում: Թեև եվրոպականացման առանձին կողմերի վերաբերյալ կատարվել են բազմաթիվ հետազոտություններ և ստեղծվել են մի շարք արժեքավոր աշխատանքներ, եվրոպականացման՝ որպես քաղաքակրթական զարգացման ու առաջընթացի, եվրոպական ինտեգրման համակարգում առանձնահատուկ երևույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ դեռևս չեն ձևավորվել միասնական մոտեցումներ և ըմբռնումներ: Այսպես, եվրոպականացումը սահմանվում է որպես եվրոպական մակարդակում ղեկավարման առանձնահատուկ կառուցվածքների ձևավորում և զարգացում (Թ. Ռիս, Ջ. Կապորասո)¹, քաղաքականության ուղղվածությունն ու ձևն այն աստիճան փոփոխած գործընթաց, ԵՄ քաղաքական և տնտեսական շարժընթացն ազգային քաղաքականության կազմակերպական տրամաբանության և մշակման մասը դարձրած գործընթաց (Ռ. Լեդրիչ)², ԵՄ-ի ընդլայնման հիմքով նրա մոդելների տարածումը նոր անդամ-երկրներում, ԵՄ-ի տարածքից դուրս եվրոպական քաղաքական կազմակերպման ու ղեկավարման ձևերի արտահանում (Յ. Օլսեն)³ և այլն:

Որպես կանոն առանձնացվում են եվրոպականացման երկու տեսակներ: Առաջինը եվրոպականացումն է ԵՄ-ի անդամ-երկրներում («ԵՄ-ականացում»), երբ ինտեգրման ազդեցության տակ գտնվող անդամները հանդես են գալիս որպես դերակատարներ, ովքեր ներդրում և ձևավորում են այդ գործընթացը: Եվրոպականացումը հանդես է գալիս որպես եվրոպական մակարդակում տնտեսաքաղաքական խնդիրների լուծմամբ և քաղաքական

¹ St' u Risse T., Cowles M. G. and Caporaso J. (eds), Europeanization and Domestic Change, Ithaca NY: Cornell University Press, 2001, p. 1:

² St' u Ladrech R., Europeanization of Democratic Politics and Institutions: The Case of France, Journal of Common Market Studies, Vol. 32, No. 1, 1994, p. 70:

³ St' u Olsen J. P., The Many Faces of Europeanization, ARENA Working Papers, 2002, WP 01/2 - www.arena.uio.no/publications/wp02_2.htm:

վարքի կանոնների մշակմամբ մասնագիտացած քաղաքական, իրավական և սոցիալական ինստիտուտների ցանցերի ձևավորում, որը ենթադրում է, նախևառաջ, ինտեգրացիոն մշակույթի և պրակտիկայի ազդեցության տարածում երկրների քաղաքական համակարգերում, եվրոպական չափման ներթափանցում քաղաքական որոշումների ընդունման ներպետական դաշտ, երբ ԵՄ-ի քաղաքական և տնտեսական շարժընթացը դառնում է ազգային քաղաքականության կառուցման օրգանական մասը:

Երկրորդը եվրոպականացումն է ԵՄ-ի «շրջագծի» երկրներում, որոնք չունեն ինստիտուտային հնարավորություններ ԵՄ-ի՝ իրենց վերաբերող որոշումների ընդունման գործընթացի վրա ազդելու համար, և եվրոպականացումն ստանում է արտաքին քաղաքականության չափում և բնորոշվում որպես ԵՄ-ի արտաքին քաղաքականության գործիք: Այս դեպքում եվրոպականացումը կարելի է բնորոշել որպես եվրոպական ինստիտուտների կողմից ակտիվացված և խթանվող գործընթաց, որը քաղաքական զարգացման վերջնական արդյունքը կապում է եվրոպական կառույցներին տվյալ պետության ինտեգրման հետ: Տեսականորեն այդ գործընթացը կարող է փոփոխել դերակատարների համոզմունքներն ու նախապատվությունները, ազդել ներպետական ու միջպետական գործընթացների վրա այն չափով, որ եվրոպական ինստիտուտներին անդամակցությունն ստանա նոր որակ և ներգրավման համատեքստում ընդունված որոշումները դառնան առավել իրագործելի: Ըստ այդմ, եվրոպականացումը կարելի է դիտարկել և՛ որպես կայունության և անվտանգության ապահովման նպատակով եվրոպական կառույցների կողմից խթանվող և ղեկավարվող գործընթաց, և՛ որպես համաեվրոպական գործընթացներին՝ ընդհանուր արժեքների և նպատակների շուրջ եվրոպական երկրների համախմբմանը մասնակցության և եվրոպական ինտեգրման գործընթացներին մասնակցության պայման, որն իրականացվում է քաղաքական ինստիտուտների, իրավական ու վարչական կառույցների, սոցիալ-տնտեսական քաղաքականության և սոցիալ-քաղաքական, ներառյալ՝ քաղաքական պատկերացումների, ինքնության, քաղաքական համակարգի և քաղաքականության այլ ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններով: Եվրոպականացումը հանդես է գալիս որպես անհամաչափ մի գործընթաց, որի բնորոշ կողմերից մեկը դերակատարների քաղաքական վարքի վրա ազդելու՝ ԵՄ-ի ունակության առկայությունն է՝ հիմնված խրախուսման կամ պատժամիջոցների սպառնալիքի վրա, առավել մեծ ազդեցություն թողնելով ԵՄ-ին անդամակցության հեռանկար ունեցող երկրներում, որտեղ անդամակցության պահանջները ԵՄ-ին տալիս են ազդեցության լուրջ լծակներ, մինչդեռ այն երկրներում, որոնք գտնվում են շրջագծի ծայրամասային հատվածում, ԵՄ-ի խթանիչ

գործառնությունն օպերատիվության տեսանկյունից էական չէ, հետևաբար, էական չէ նաև ԵՄ-ի ազդեցությունն այդ երկրների քաղաքական կյանքի վրա:

Եվրոպականացման արդյունքները ձեռք են բերվում երկու հիմնական մեխանիզմներով՝ փոխալսմանավորումը, որն ուղղակի պահանջ է իրականացնելու որոշակի քաղաքական գործողություններ, պայմանով, որ դրական տեղաշարժերը կխրախուսվեն՝ ընդհուպ մինչև եվրոպական ինստիտուտներին անդամակցությունը, իսկ կանոններին չհետևելը կարող է հանգեցնել պատժամիջոցների կիրառման, և սոցիալականացումը, որի հիմքում ընկած է «եվրոպական արժեքների» և «եվրոպական ուղղու» որդեգրումը եվրոպական դերակատարների հետ սերտ փոխհարաբերությունների և եվրոպական ոճի ներքաղաքական ինստիտուտների ամրագրման պայմաններում¹:

Հիմք ընդունելով մի շարք հեղինակների պնդումները եվրոպականացման արդյունավետության մասին և դրանք համադրելով եվրոպական կառույցներին անդամակցության փորձի, համաեվրոպական գործընթացին հետխորհրդային, մասնավորապես, հարավկովկասյան երկրների ներգրավման արդի միտումների հետ՝ կարելի է եզրակացնել, որ այն կարող է նպաստել համապատասխան որոշումների ընդունմանը, եթե ներառի հետևյալ պայմանները.

- Կառավարող քաղաքական ընտրանիների համար եվրոպականացումից (հնարավոր) օգուտը պետք է լինի ավելին, քան ստատուս-քվոյի պահպանումից¹: Բայց, որպես կանոն, եվրոպական շրջագծում ընտրանիները հասարակության առջև պատասխանատու են ոչ միշտ և ամբողջությամբ, եթե ոչ ընդհանրապես: Այստեղ հանրության քաղաքական ներկայացուցչության և հսկողության մեխանիզմները թույլ են զարգացած, և եթե անգամ եվրոպականացումից օգուտն ակնհայտ է բնակչության համար, դա կարճա- և միջնաժամկետ հեռանկարում անպայմանորեն չի հանգեցնի վարքի փոփոխությունների, քանզի այդ ընտրանիները հետապնդում են իրենց նեղ շահերը և համեմատաբար ինքնավար են բնակչությունից:
- Եվրոպականացման օգուտները պետք է ունենան հավանականության բարձր աստիճան և հասանելի լինեն տեսանելի ժամանակահատվածում, այլապես դրանք թույլ խթան կհանդիսան ներգրավվող երկրների համար: Կարելի է ակնկալել, որ ԵՄ-ին անդամակցության հեռանկարը փոխհատուցող որոշ տեսանելի ու հրապուրիչ միջանկյալ օգուտներ՝ առևտրի ազատականացումը, քաղաքացիների ազատ տեղաշարժը, էական խթան կհանդիսանան հարավկովկասյան երկրների զարգացման և տարածաշրջանային

¹ Այդ մեխանիզմների մասին առավել մանրամասն տես Checkel, Jeffrey T., Compliance and Conditionality, ARENA Working Papers WP 00/18, 2000, p. 18 - www.arena.uio.no/publications/wp00_18.htm:

կայունության հաստատման համար և կոյուրացնեն ինտեգրման նպատակների իրագործումը:

- Եվրոպականացումը պետք է հրապուրիչ լինի որոշումների ընդունման վրա էական ազդեցություն ունեցող քաղաքական ուժերի գերակշիռ մեծամասնության համար:
- Եվրոպականացումը պետք է նպաստի այն քաղաքական ուժերի դիրքերի ամրապնդմանը, որոնք հավանություն կտան ներգրավման խորացմանը², հետևաբար եվրոպական ինստիտուտների գործողությունները կամ եվրոպականացման արդյունքները պետք է հավանության արժանանան հիմնական ներքաղաքական դերակատարների կողմից:
- Եվրոպականացումը պետք է ընդունելի լինի տվյալ երկրի վրա էական ազդեցություն ունեցող հիմնական արտաքին ուժերի կողմից: Այն հանգամանքը, որ ՌԴ-ը չունի ԵՄ-ին անդամակցության նպատակ, նպաստում է եվրոպականացման դրական ազդեցությանը Մոլդովայում, բայց թուլացնում նույն այդ ազդեցությունը Հարավային Կովկասում: Իսկ հետխորհրդային տարածության երկրների մի շարք «ինտեգրացիոն» նախաձեռնություններ ունանց կողմից ընկալվում են որպես եվրոպականացման կենսունակ այլընտրանքներ:

Գոյություն ունեն այդ ազդեցության հնարավորությունը սահմանափակող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են քաղաքական համակարգի ոչ բավարար զարգացվածությունը և քաղաքական ընտրանիների վախճան իրենց դիրքերի թուլացման նկատմամբ, այն իրավիճակը, երբ ներգրավման ծախսերն ավելին են, քան ինտեգրման հեռանկարով եվրոպականացման ծախսերը և այլն³:

Հարավային Կովկասում եվրոպականացումը հարկ է դիտարկել եվրոպական քաղաքական տարածության մեջ տարածաշրջանի երկրների ներգրավման դիտանկյունից, ինչը, սակայն, միանշանակ չի ընկալվում այդ երկրների ղեկավար շրջանակների կողմից: Այսպես, Ա. Ոսկանյանը տարբերում է Հարավային Կովկասի եվրոպական ինտեգրման երկու ուղի՝ «եվրոպական» և «ամերիկյան», որոնցից երկրորդը եվրոպականացման իմաստը տեսնում է ոչ միայն ԵՄ-ի շրջանակներում պետությունների միության հետագա զարգացման, այլև առավել ճկուն, բոլոր եվրոպական երկրներից ընդգրկող միավորման կառուցման մեջ, որի հիմքում ընկած կլինեին անդամակցությունը

¹ St' u Schimmelfennig F., Engert S. and Knobel H., Costs, Commitment, and Compliance. The Impact of EU Democratic Conditionality on Latvia, Slovakia, and Turkey, in Journal of Common Market Studies 2003, p. 495-517:

² St' u Risse T., Cowles M. G. and Caporaso J., նույն տեղում, pp. 1-20:

³ Առավել հանգամանորեն տես Noutcheva G., Tocci N., Coppieters B., Kovziridze T., Emerson M. and Huyseune M., Europeanization and Secessionist Conflicts: Concepts and Theories - www.ecmi.de/jemie/download/1-2004Chapter1.pdf:

ՆԱՏՕ-ին և համատեղ պայքարը միջազգային սպառնալիքների դեմ: Տվյալ դեպքում ԵՄ-ը դիտարկվում է որպես ընդհանուր գործընթացի հավաքական մասնակիցներից մեկը և փաստացիորեն կորցնում հավաքագրող, «եվրոբյուրեղացման» շարժումը իրականացնող, խթանող և վերահսկող միակ կենտրոնի կարգավիճակը: Հարավկովկասյան երկրների համար եվրոպականացման այս մոդելի գրավչությունն այն է, որ դրա առաջարկած ուղին առավել արագընթաց է, քան ավանդական եվրոպական սխեման, իսկ դրա որոշ տարրեր ունեն մեծ արժեք և կարևոր են ոչ միայն ինքնին, այլև դրանում դրված լրացուցիչ ինտեգրող գործոնների շնորհիվ: Եվ չնայած այդ ուղին չի տալիս եվրոպական քաղաքական, ինստիտուտային, սոցիալական և մշակութային ժառանգության լիարժեք ու բովանդակային յուրացման իրական հնարավորություն, ԵՄ-ի առաջատար և հարավկովկասյան երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման տարբերություններն այնքան մեծ են, որ անգամ եվրոպական ուղղության ամենամոլի կողմնակիցներն այստեղ խոսում են ԵՄ-ին աստիճանական ինտեգրման հեռանկարների մասին՝ հասկանալով, որ այդ երկրների ուղին դեպի ԵՄ չի կարող միջնորդված չլինել¹: Փաստորեն, այս դեպքում եվրոպականացումն ընկալվում է ոչ միայն ԵԽ-ի կամ ԵՄ-ի հետ ուղղակի հարաբերությունների, այլ ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի հետ սերտ գործակցության շրջանակներում: Հենց դա է պատճառը, որ, օրինակ, ՆԱՏՕ-ին անդամակցությունը կամ սերտ համագործակցությունը դիտարկվում են որպես այդ երկրների եվրոպական ինտեգրման կարևորագույն ամրագրումներ և բաղկացուցիչներ:

Առայժմ եվրոպականացումը հարավկովկասյան երկրներում այդքան էլ մեծ արդյունքներ չի տվել, քանզի բարեփոխումներն անհրաժեշտ են մոտ հեռանկարում, մինչդեռ եվրոպականացումից էական օգուտներ ստացվում են բավական ուշ ժամանակահատվածում: Այս համատեքստում Հարավային Կովկասի բացառումը եվրոպական ինտեգրման քաղաքականությունից, փոխարենը շեշտադրելով միայն «չորս ազատությունների» զարգացման աջակցության միջոցով առավել ներգրավումն առանց անդամակցության կոնկրետ հեռանկարի, կարող է ունենալ ապահավաքագրողական ազդեցություն տեղի քաղաքական ընտրանիների ու հասարակական կարծիքի վրա:

Հարավային Կովկասի եվրոպականացման վրա էական բացասական ազդեցություն ունի «սառեցված հակամարտությունների» տևական առկայությունը: Ի. Մուրադյանի կարծիքով, այսօր եվրոպական դեկավար շրջանակներում աստիճանաբար ամրապնդվում է այն համոզումը, որ ռազմական գործողությունների բացակայությունն ինքնարժեք է, և վիճելի տարածքների նկատմամբ իրավունքները վերականգնելու փոխարեն մեծ

¹ St' u Voskanyan A., Армения: кооперация с западными системами безопасности (НАТО), (Кишинев, 07.06.2005) - <http://harvard-bssp.org/rus/publications/> - Harvard Black Sea Security Program:

կարևորություն ունեն մարդու իրավունքների, քաղաքացիական հասարակության և սոցիալական զարգացման աջակցությունը¹: Այս իմաստով եվրոպականացումը կարող է դրական ազդեցություն ունենալ ոչ թե հակամարտությունների կարգավորման, այլ դրանց վերափոխման՝ անհամատեղելի դիրքորոշումները համատեղելի դարձնելու և կողմերի միջև հանդուրժողականության մթնոլորտն ամրապնդելու միջոցով:

Եվրոպականացման, իսկ հետագայում՝ եվրոպական ինտեգրման համատեքստում որոշիչ մնում են այն հարցերը, թե ցանկանում են արդյոք այդ երկրներն իրենք պատկանել Եվրոպային, և եթե այո, ապա ի՞նչ չափով են ցանկանում լինել «եվրոպական» պետություն, և ի՞նչ նշանակություն ունի դա նրանց համար: Այսինքն, խնդիրը կայանում է այդ երկրների «եվրոպականության» կամ «եվրոպական» արժեհամակարգին հավատարմության մեջ: Հարավկովկասյան երկրներն արդեն հայտարարել են իրենց «եվրոպական» ընտրության մասին և ձգտում են առավելագույնս ներգրավվել եվրոպական կառույցներին ու գործընթացներին: Բայց դրանից առավելագույն օգուտ ստանալու համար անհրաժեշտ է հենց այդ կառույցների շահագրգռությունը տարածաշրջանի երկրների ակտիվ մասնակցության մեջ: ԵՄ-ն, օրինակ, առավել նպատակահարմար է համարում համագործակցությունը կայուն, տնտեսապես և քաղաքականապես ինտեգրված տարածաշրջանների, քան առանձին երկրների հետ:

Եվրոպական կառույցներին հետևողական ներգրավման կուրսը, որոշ վերլուծաբանների համոզմամբ, կարող է դրականորեն ազդել հարավկովկասյան հասարակությունների համախմբման վրա, և, չնայած լուրջ ներհասարակական խնդիրների առկայությանը, տարածաշրջանի բոլոր երկրներում տարբեր համակցությամբ առկա են անհրաժեշտ նախադրյալներ եվրոպական ինտեգրումը ոչ միայն պետական քաղաքականություն, այլև հասարակական զարգացման առաջնահերթ ուղղություն դարձնելու համար¹: Ի. Կոմիսինայի կարծիքով, ԵՄ-ին անդամակցության ամենափոքր շանսերն ունի Ադրբեջանը, քանզի, ինչպես Թուրքիայի դեպքում, այստեղ ևս ոչ միայն չեն ապահովվում ժողովրդավարական սկզբունքները, այլև կրոնամշակութային տեսանկյունից Ադրբեջանը չի կրում Եվրոպայի քրիստոնեական ժառանգությունը: Որոշ խնդիրներ ունի նաև ՌԴ-ի հետ ավանդական ռազմավարական հարաբերություններ ունեցող Հայաստանը, որն ակտիվորեն ներգրավվում է հետխորհրդային տարածությունում ՌԴ-ի ղեկավարությամբ իրականացվող նախագծերին: Իսկ ահա Վրաստանն իր հարևանների համեմատությամբ ունի որոշակի առավելություններ և հեղինակը չի բացառում, որ ԵՄ-ը խախտի իր կանոնները և անհատական

¹ St'u Мурадян И., Интересы Европейского Союза на Южном Кавказе и Карабахская проблема, «21-րդ դար», թիվ 3(5), 2004, с. 54:

անդամակցության հնարավորություն տա այդ երկրին²: 1997թ. Վրաստանի խորհրդարանն ընդունեց հայեցակարգային մի փաստաթուղթ, որում եվրոպական կառույցների կառուցողական դերը հակադրվում էր ՌԴ-ի «կայսերական» քաղաքականությանը: 1999թ. Է. Շևարդնաձեն վրացական արտաքին քաղաքականության եվրոպական ուղղությունը հռչակեց որպես առաջնահերթություն: Նույն թվականին Վրաստանն անդամակցեց ԵԽ-ին՝ չնայած ազգամիջյան չկարգավորված հակամարտությունների առկայությանը: Իսկ 2003թ. Մ. Սահակաշվիլիի իշխանության գալով «եվրոպական ուղղությունը» և ՆԱՏՕ-ին ինտեգրումը դարձան Վրաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղություններ: Չնայած Վրաստանի այդչափ «եվրոպականությանը»՝ 2004թ. ԵԽ ԽՎ-ն ընդունեց, որ Վրաստանը չի կատարել իր անդամակցության պարտավորությունները:

Թեև Վրաստանը քանիցս հայտարարել է ԵՄ-ին անդամակցելու իր մտադրությունը, առայժմ այդ գործընթացի սկիզբը երաշխավորող ոչ մի փաստաթուղթ կնքված չէ և, հավանաբար, չի կնքվի այնքան ժամանակ, քանի դեռ Վրաստանը չի կարգավորել իր ներքին խնդիրները: Վրաստանը կարողացել է տարածաշրջանում առաջատար տեղ գրավել եվրոպական կառույցների հետ համագործակցության հարցում, ինչը պայմանավորված է այդ երկրի աշխարհաքաղաքական դիրքով և արտաքին քաղաքական կողմնորոշմամբ: Վրաստանը համարվում է կասպյան ավազանը սևծովյան շրջանի և Թուրքիայի հետ կապող բնական միջանցք, որը դեպի Արևմուտք կասպյան նավթի արտահանման համար ՌԴ-ը, Հայաստանը և Իրանը շրջանցող միակ ուղին է: ԵԽ-ին անդամակցելուց հետո վրացական մի շարք վերլուծաբաններ կարծում էին, որ Վրաստանը ԵՄ-ի անդամ կդառնա ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո: Ըստ այդմ, ՆԱՏՕ-ի արևելյան ընդլայնումը ժամանակի ընթացքում պետք է ընդգրկեր նաև հարավկովկասյան երկրները, ինչով տարածաշրջանը կստանար պաշտպանական վահան¹: Բայց, թեև ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հաջողություններին, այդ կառույցին ևս Վրաստանի անդամակցության հեռանկարը մնում է բավական մշուշոտ:

ԵՄ-ի քննադատությանն է արժանացել նաև Ադրբեջանը՝ թեև դրա ղեկավարությունն ընդգծում է ԵՄ-ի հետ բոլոր ուղղություններով ինտեգրման անհրաժեշտությունը՝ Ադրբեջանը համարելով նոր Եվրոպայի բաղկացուցիչ մասը: Արևմուտքի հետաքրքրությունն Ադրբեջանի նկատմամբ, ոմանք պայմանավորում են տեղի էներգետիկ պաշարներով, ինչն Ադրբեջանը փորձում է օգտագործել և դրանից ստացվող եկամուտները ներդնել երկրի տնտեսական և ռազմական զարգացման հիմքում՝ ձգտելով

¹ Տե՛ս Расширение Европы и Южный Кавказ, Центральная Азия и Кавказ, N 4(34), 2004, с. 42-43:

² Տե՛ս Комиссина И. Перспективы интеграции республик Закавказья в Европейский Союз, Центральная Азия и Кавказ, N 1(13), 2001, с. 111-113:

փոփոխել իր դերը տարածաշրջանում, վերազինել բանակը և ռազմաքաղաքական առումով դառնալ տարածաշրջանի առաջատար երկիրը՝ դրանով հնարավոր դարձնելով հարևանների հետ տարածայնությունների կարգավորումն իր օգտին²:

Եվրոպական ուղղությունն արտաքին քաղաքականության առաջնահերթություն է նաև Հայաստանի համար: Եվրոպական ինտեգրմանը և զարգացման եվրոպական մոդելին նախընտրություն տալն Ա. Ոսկանյանը բացատրում է մշակույթների և արժեքային համակարգերի մերձությամբ, նաև այն հանգամանքով, որ այդ ընտրությունը չի հանդիսանում կողմնորոշում ավանդական իմաստով, այլ նշանավորում է լայն գործակցային գործընթացի սկիզբը¹: Թեև հարավկովկասյան երկրներից Հայաստանն առաջինն ստացավ ԵԽ ԽՎ-ի հատուկ հրավիրյալի կարգավիճակ (1996թ.), հաջորդած տարիներին ԵԽ-ի կողմից մշտապես քննադատվում էր քաղաքականության «ոչ եվրոպական» ոճի, մասնավորապես, ներքին քաղաքականության մեջ ավտորիտար տարրերի ուժեղացման, ԼՂ հարցում ճկունության բացակայության մեջ: Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում մշտապես շրջանառվում է այն կարծիքը, թե եվրոպական կառույցները ձգտում են հայ հասարակությանը փաթաթել խորթ պատկերացումներ՝ հանդուրժողականությունը սեռական փոքրամասնությունների, ոչ ավանդական կրոնական համայնքների նկատմամբ և այլն: Դրա և կառավարման համակարգի բազմաթիվ բացթողումների համար ՀՀ-ը քանիցս արժանացել է եվրոպական կառույցների քննադատությանը, ինչը, սակայն, չի խանգարում դանդաղորեն, բայց հաստատուն առաջ տանել քաղաքական համակարգի եվրոպականացման գործընթացը, որի շրջանակներում մեծ առաջընթաց համարվեցին 2005թ. սահմանադրական բարեփոխումները:

Եվրոպական կառույցների չափանիշերին ՀՀ-ի հասարակական-քաղաքական համակարգի համապատասխանեցման գործընթացը յուրօրինակ խթան է սոցիալ-քաղաքական և տնտեսական բարեփոխումների համար: Դա որոշակի դրական դեր է խաղում մեր հասարակության զարգացման գործում, քանզի պետության կայացման և զարգացման գործում պետք է լինի ռազմավարական նպատակ, որը կխթանի այդ զարգացումն ու կմիավորի ազգը: Ըստ որում, այդ նպատակի փոփոխության դեպքում զարգացման նախորդ շրջանում ձեռք բերված ողջ դրականը կարող է օգտագործվել նոր նպատակի իրագործման համար: Բայց պետք չէ տնտեսական և սոցիալ-քաղաքական

¹ Տե՛ս, օրինակ, Зурабашвили Г. Южный Кавказ на пути к Европе, Центральная Азия и Кавказ, N 4(34), 2004, с. 160-162:

² Տե՛ս Оганесян С., Петросян Д., Армения, Европа, Азия: коридоры и перекрестки, Армянский центр стратегических и национальных исследований, Ер., 2001, с. 77-80, 89-91:

փոփոխությունները կապակցել բացառապես «եվրոպական ընտրության» հետ: Դրանք մեր հասարակության զարգացման օբյեկտիվ գործընթացի բաղկացուցիչներն են, և պետք է միայն հստակ գիտակցել դա, կատարել որոշակի եզրակացություններ իրական իրավիճակի վերաբերյալ և դրա բոլոր հնարավորություններն օգտագործել սեփական շահերի հիմքով համապատասխան ձեռնարկումների համար:

Ներկայում Հարավային Կովկասի թույլ «եվրոպականացվածությունը» եվրոպական կառույցներին այդ երկրների անդամակցության հիմնախնդիրներից մեկն է, և ԵՄ-ին անդամակցությունը, որը նշանակալիորեն կբարձրացներ այս երկրների քաղաքական կարգավիճակը, տեսանելի ապագայում անիրական է: Հարավային Կովկասի եվրոպականացումն այժմ ինստիտուտացված է հիմնականում ԵԱՀԿ-ի և ԵԽ-ի կողմից, որոնց անդամակցությունը թեև նշանակալի է այս երկրների համար, բայց այդ կառույցներին չի տալիս տարածաշրջանում ուժերի հավասարակշռության վրա գործունե ազդեցության լծակներ:

Առայժմ տարածաշրջանում ԵՄ-ի դերակատարումը մնում է ցածր մակարդակի վրա, ինչը պայմանավորված է եվրոպական կառույցների ազդեցության գործիքների և տարածաշրջանի երկրներում եվրոպականացման ուղղությամբ ձեռնարկվող միջացառումների ցածր արդյունավետությամբ: Այդ խնդիրների կարգավորումը հաճախ ուղղակիորեն կապվում է հակամարտությունների կարգավորման հետ, ինչը հնարավոր է համարվում տարածաշրջանում ուժերի հավասարակշռության հիմնարար փոփոխության դեպքում, երբ փոփոխվեն երկրների դիրքորոշումները՝ թույլ տալով ընդունել հակամարտությունների կարգավորմանն ուղղված առավել լեգիտիմ որոշումներ: Ներկայում ազգային, տարածաշրջանային և եվրոպական մակարդակներում քննարկումներում գերիշխում են աշխարհաքաղաքական հաշվարկներն ու տարածաշրջանում ռազմավարական վերադասավորումների ակնկալիքները, որոնցում ԵՄ-ին տրվում է ածանցված, երկրորդական դերակատարում՝ նրան չհամարելով ուժերի հավասարակշռությունը փոփոխելու ընդունակ գործոն, քանզի, նախ, տարատեսակ միջնորդական առաքելություններում նա խոսում է ոչ թե մեկ, այլ իր անդամների մի քանի ձայներով, երկրորդ, չկան էական շարժառիթներ, որպեսզի ուժերի տարածաշրջանային հարաբերակցությունը փոփոխելու համար ԵՄ-ը հակադրվի ՌԴ-ին, քանզի դա չի բխում նրա կենսական շահերից, երրորդ, եվրոպական ինտեգրմանը Հարավային Կովկասի ապագա մասնակցությանը ԵՄ-ն առայժմ չի կարող հստակ չափանիշեր ու պահանջներ ներկայացնել:

¹ St'u Voskanyan A., О комплементаризме и возможных моделях европейской интеграции стран Южного Кавказа - http://scirs.org.ge/russian/analytic/round_three/voskanyan.htm - «От «транскавказского диалога» к концепции региональной безопасности» Тбилиси, 17-19 мая 2003 года, III круглый стол SCIRS:

Եվրոպականացումը մեծապես նպաստում է եվրոպական կառույցների ու հարավկովկասյան երկրների փոխգործակցության արդյունավետ և փոխշահավետ ուղիների կառուցմանը: Տեղի երկրների հետ իր հարաբերություններում ԵՄ-ն ընդգծում է եվրոպական կառույցներում նրանց ակտիվ ներգրավման անհրաժեշտությունը, ինչը պահանջում է քաղաքացիական հասարակության բոլոր ոլորտներում եվրոպական արժեքների համակարգված ընդունում և զարգացում: Արդյունքում եվրոպական կառույցներն ակնկալում են Հարավային Կովկասում ստեղծել կանխատեսելիության մթնոլորտ, երբ տարածաշրջանային զարգացումները կընթանան փոխալայնանավորման շրջանակներում, իսկ հարավկովկասյան երկրների համար դա նշանակում է որոշակի երաշխիքներ եվրոպական ինտեգրմանը մասնակցելու և եվրոպական թատերաբեմում իրենց դիրքերն ամրապնդելու համար, մանավանդ, որ այդ երկրների բնակչության մեծ մասի կողմից կայունությունը, ազգային համախմբումը և տնտեսական բարեկեցությունն ուղղակիորեն կապվում են Արևմուտքի հետ առավել սերտ հարաբերությունների կառուցման հետ:

Հարավային Կովկասի եվրոպականացումն արդեն քաղաքական իրողություն է, և անհրաժեշտ է, նախ, յուրացնել եվրոպական քաղաքական լեզուն և սովորել պաշտպանել ազգային շահերը եվրոպացիների համար ընկալելի քաղաքական և իրավական լեզվով, երկրորդ, դառնալ տարածաշրջանի առաջադիմական զարգացման նախաձեռնող՝ գիտակցելով, որ կայունությունն ինքնին, առանց առաջընթացի, անհնար է, երրորդ, ԵՄ-ի հետ փոխհարաբերություններում հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև Հարավային Կովկասում նրա քաղաքականության ուժեղ և թույլ կողմերն ունեն տարբեր տրամաբանություն, դրանք հենվում են «եվրոպական» արժեքների և նորմերի տարածման վրա և ուղղված են ներպետական կառուցվածքների ու ազգային քաղաքական ընտրանիների վարքը ժողովրդավարականության ու լեգիտիմության չափորոշիչներին համապատասխան վերափոխմանը:

Ակնհայտ է, որ ԵՄ-ի ինստիտուտների հարաբերականորեն արագացված զարգացմանը, անդրազգային կապերի ընդլայնմանն ու խորացմանը զուգահեռ անդամության նոր թեկնածուների համար ավելի բարդ կդառնա ԵՄ-ի շրջանակներում տեղի ունեցող գործընթացներին տնտեսաքաղաքական փոխակերպման գործընթացները համապատասխանեցնելը, քանզի անդամության չափանիշերն ու չափորոշիչները որոշվում են ինտեգրման տվյալ ժամանակահատվածի մասնակիցների կողմից և բազմակի ու օրինաչափորեն վեր են աճել այդ գործընթացի սկզբնական շրջանի համեմատությամբ: Հետևաբար, նոր-ազատական հայեցակարգերի առկա ազդեցության պահպանման դեպքում ԵՄ-ին չանդամակցող եվրոպական երկրները կկանգնեն նոր

երկրնտրանքի առջև՝ որդեգրել զարգացման այդ հայեցակարգերը ԵՄ-ի շրջանակներից դուրս կամ դա կատարել ԵՄ-ի ներսում: ԵՄ-ին անդամակցության գրավչությունը տվյալ դեպքում կնվազի, քանզի այն այլևս չի հանդիսանա զարգացման լավագույն այլընտրանք:

Ամեն դեպքում հարավկովկասյան երկրներն արդի մարտահրավերներից արդյունավետ դիմակայել կարող են միայն համատեղ ջանքերով՝ անկախ դրանից, թե այդ ջանքերը համախմբված են արտատարածաշրջանային, թե տարածաշրջանային ընկերակցության մեջ: Դրա համար նախ անհրաժեշտ է գիտակցել տարածաշրջանի միասնականության անհրաժեշտությունը և ապահովել այն, այսինքն՝ միջազգային հանրությանը ներակայանալ միասնաբար, քանզի Հարավային Կովկասի ուժը, դերը և գրավչությունն արտաքին ուժերի հետ փոխհարաբերություններում պայմանավորված են ոչ այնքան այստեղ այդ ուժերի ներկայությամբ ու դրանց հարաբերակցությամբ, որքան հարավկովկասյան երկրների համախմբվածությամբ և տարածաշրջանայնացման մակարդակով:

Процессы европеизации на Южном Кавказе

В статье анализируются некоторые теоретические и практические вопросы европеизации, дается новое определение этого процесса и его место и роль в процессе европейского объединения. В контексте участия южнокавказских государств в общеевропейских процессах (процессы объединения европейских государств на основе общих ценностей и задач), различаются две направления европеизации: «ЕС-изация», процесс влияния структур и распространение моделей ЕС на новые члены, и европеизация соседних с ЕС стран, когда под влиянием европейских структур происходит трансформация общественно-политических, юридических и экономических систем этих стран. При этом европеизация рассматривается как обязательное условие для участия в общеевропейских процессах и составная часть первоначального этапа европейской интеграции.

Processes of europeanization on Southern Caucasus

In article some theoretical and practical questions of europeanization are analyzed, new definition of this process both its place and a role is given during the European association. In a context of participation of the countries of Southern Caucasus in the all-European processes (processes of association of the European states on the basis of the common values and tasks), differ two directions of europeanization: "EU-ization", process of influence of structures and distribution of models of EU on new members, and europeanization of the countries next to EU, when under influence of the European structures to occur transformation of political, legal and economic systems of these countries. Thus europeanization is examined as an obligatory condition for participation in the all-European processes and a component of an initial stage of the European integration.